

ԳԻՏԱԿԱՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

(ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը, այդ կայտառ և կենսախիճ մտավորականը, բոլորել է իր կյանքի վաթսուց տարրն: Իր ուժերի ծաղկման շրջանում գտնվող գիտնականն արդեն կարողացել է մնայուն արժեքներ ստեղծել մեր ժողովրդի պատմության և ընդհանրապես հայագիտության ասպարեզում:

Մկրտիչ Ներսիսյանը ծնվել է 1910 թ., Աշտարակի շրջանի Փարբի գյուղում: Այնտեղ էլ նա ստացել է տարրական կրթություն, ապա ավարտել Երևանի Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1927 թ. նա ընդունվել և չորս տարի հետո հաջողությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, իսկ 1936-ին՝ նաև ասպիրանտուրան: Դեռ ուսումնառության տարիներից սկսվել է նրա մանկավարժական ու գիտական բեղմնավոր գործունեությունը. բանֆակի և համալսարանի քսանամյա դասախոսը հրատարակում է հոդվածներ, կազմում ու խմբագրում է փաստաթղթերի ժողովածու Մայիսյան ապստամբության մասին, ապա սկսում է որոնել հայ հեղափոխական շարժումների գաղափարական ակունքները, ուսումնասիրում է Ռուսաստանի նարոդնիկության պատմությունը, բացահայտում նրա արտահայտություններն ու կապերը Անդրկովկասի առաջադիմական շարժումների ու հասարակական-քաղաքական հոսանքների հետ:

1940 թ. երևան է գալիս արդեն պատմական գիտությունների թեկնածու Մ. Ներսիսյանի գիրքը՝ «Նարոդնիկական

խմբակներն Անդրկովկասում» խորագրով: Այդ աշխատության մեջ հեղինակը ցույց է տալիս, որ «1870—80-ական թվական-



ների նարոդնիկությունը, որպես հետոն-ֆորմյան շրջանում ցարիզմի, կալվածատիրության դեմ գյուղացիության, մանր արտադրողների մղած հեղափոխական պայքարի արտահայտություն, սոցիալ-տնտեսական անհրաժեշտ հիմքեր ունկրնաև Անդրկովկասում»¹: Ելնկով այդ ճիշտ որոյնքից և ուսումնասիրելով արխիվային

¹ Մ. Ն ե ռ ս ի ս յ ա ն, Նարոդնիկական խրմ-րակներն Անդրկովկասում, Երևան, 1940, էջ 73:

փաստաթղթերը, հեղինակը ցույց է տալիս, որ «ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անգլիոյում, 1860—1880-ական թվականներին հեղափոխական շարժումները սկսվելուց առաջ հեղափոխական ռազմաչին ինտելիգենցիայի կողմից»:

Ինչնչո՞վ ուս հեղափոխականների երեք սերնդի մասին Լենինի նշանավոր դրույթից են ուշադրությամբ քննելով պատմական փաստերը, դեռևս 1940 թ. Մ. Ներսիսյանը Իսկուսում է այն հետևության, որ Հայաստանի ու Անգլիոյում սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարը ղեկավարել է ժողովրդական զանգվածների շահերն ու ձգտումներն արտահայտող ռազմաչին մտավորականությունը, որը երկու թևի վրա բաժանված. «Մի մասը, առաջ քաշելով միայն ազգային հարցը և այն չկապակցելով դեմոկրատական հեղափոխության ընդհանուր հարցերի հետ, իրեն հեռու էր սյահում համառուսական հեղափոխական շարժումներից... Իսկուսչին ինտելիգենցիայի մյուս թևը, ընդհակառակը, կապելով Անգլիոյում ժողովուրդների ազատագրության գործը ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակի հետ, իր պայքարը միաձուլում էր ռուսական հեղափոխական ընդհանուր շարժման հետ...»:

Իր առաջին իսկ ուսումնասիրություններով Մ. Ներսիսյանը փնտրում ու գտնում է այն հիմնավոր կապերը, որոնք ընդհանուր են հայ ժողովրդի պատմության և Անգլիոյում ու Ռուսաստանի ժողովուրդների պատմության համար: Կոս հանգամանորեն բացահայտում է մեր երկրի ժողովուրդների շահերի ընդհանրությունը՝ ինչպես անցյալում, այնպես էլ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի, սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ժամանակաշրջաններում, երբ սպառնալիցության հրատապ խնդիրն է դառնում ցույց տալ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության հսկայական նշանակությունը: Այդ իմաստով հատկա-

նշական է 1940 թ. նրա հրատարակած մի շարք հոդվածներ՝ «Լենինը և հայ ժողովրդի ազատագրությունը», «Երկր-հեղինակի շարժման արձագանքները վասպուրականում», «Արխիվային մի նոր փաստաթուղթ 1512 թ. Հայրենական պատերազմի մասին»² և այլն:

Հայրենական պատերազմի հենց սկզբից, կամավոր մեկնելով ռազմաճակատ, Ներսիսյանը մասնակցում է մարտերին, օրինակելիորեն կատարում դիվիզիայի քաղաքացիական հրահանգչի պարտքը, 1943 թ. վերավոր վիճակում փոխադրվում է Հայաստան ու, ասպարհակելով, հանդես է գալիս մարտական հոդվածներով, լուսաբանում սովետական ժողովուրդների ազգային հերոսների սխրագործությունները, սիրույազանդում սովետական հայրենասիրության գաղափարները: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա հոդվածները Սուվորովի, Կուտուզովի, Ալբանսկիների, Լավարենների, Ախշարումովների և ՄԻՄ—ՄԻԱ դդ. շատ ուրիշ ռազմական ու քաղաքական գործիչների, սյդ թվում նաև Կովկասին որդեգրված ռուս դեկարիստների մասին: Ուշադրության են արժանի 1943 թ. «Տեղեկագրում», ապա առանձին գրքույկով լույս տեսած աշխատությունները՝ Սուվորովի և հայ գործիչների համալուծող քանքերով ազատագրական շարժման գործնական ծրագրեր ստեղծելու և ՄԻՄ դ. հայ-ռուսական կապերի ու յարեկամության վերաբերյալ: Հեղինակը ցույց է տալիս, որ «ռուս-հայկական հարաբերությունները ՄԻՄ դ. երկրորդ կեսում ծավալվեցին նոր, քաղաքական ավելի լայն մակարդակի վրա», անդրադառնում է այն կապերին, որոնք հաստատվեցին ռուս գործիչների, այդ թվում Սուվորովի ու Անգլիոյում ժողովուրդների ազատագրական շարժման ղեկավար-

² Տե՛ս «Տեղեկագիր», 1940, № 4—5, 1941, № 5—6:

³ Տե՛ս Մ. Ներսիսյան, Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770—1790 թթ., Երևան, 1944:

ների միջև՝ սկսած Ղրիմի հայ բնակչությանը Ղոնի ափերին վերաբնակեցնելու ժամանակից մինչև դարի վերջը: Փաստերով ցույց է տրվում Սուվորովի ուշադիր ու բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ, միաժամանակ ընդգծվում, որ «Սուվորովի ռազմական հանձնարի ազդեցությունը մեծ է եղել հետագա շրջանների հայ զինվորականության վրա»:

Մ. Ներսիսյանը հետագայում մեր երկրի արխիվներում հայտնաբերել է նորանոր նյութեր և, հարստացնելով հայ-ռուս կապերի մասին իր աշխատությունը, երկու հատորով հրատարակել է ռուսերեն⁴: Առաջին հատորում ընդգրկված են նոր աշխատություններ հայ ազատագրական շարժման վերաբերյալ, ինչպես նաև «Հայերի մասնակցությունը 1812 թ. Հայրենական պատերազմում», «Դեկաբրիստ Ե. Լաչինովը և նրա օրագրերը», «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումը ժամանակակիցների գնահատությամբ» ուսումնասիրություններն ու այդ թեմաների շուրջ նորահայտ արխիվային փաստաթղթերը: Երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է «Դեկաբրիստները Հայաստանում» թեմային և դարձյալ պարունակում է արխիվային մեծարժեք փաստաթղթեր: Այդ աշխատությունը պատշաճ մակարդակով բացահայտում է հայ և ռուս ժողովուրդների տնտեսական, քաղաքական, ռազմական ու կուլտուրական կապերը հայության համար բախտորոշ մի ժամանակաշրջանում՝ XVIII—XIX դդ., երբ պատմականորեն նախապատրաստվեց և XIX դ. առաջին երեսնամյակում կենսագործվեց Արևելյան Հայաստանը թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրելու ծրագիրը:

Մ. Ներսիսյանը խոսում ու համոզիչ փաստերով ցույց է տալիս, թե ինչպես ռուս առաջավոր մարդիկ, այդ թվում ա-

ռաջին ռուսական ճեղատիսակալները՝ Կովկաս աքտորված հարյուրավոր դեկաբրիստները, մյուս ռուս զինվորների և հայ վրացի ու ադրբեջանցի կամավորների հետ միասին պայքարել են Երևանի ու Նախիջևանի խանությունների բնակչությանը ֆիզիկական ոչնչացման վտանգից ազատելու համար, յուրովի կենսագործելով ռուսական զորքերի առաջխաղացման ցարական պլանները: Ուսումնասիրության մեջ ու բերված փաստաթղթերում ցույց է տրված նաև այն խոշոր կուլտուրական դերը, որ կատարել են աքտորված դեկաբրիստները Կովկասում, այն ջերմ բարեկամությունը, որ հաստատվել է նրանց և Անդրկովկասի առաջադեմ գործիչների միջև: Երկուսն էլ նրանց հետ կապերում, որ կատարել է հայ ժողովուրդը Ռուսաստանի տնտեսական և քաղաքական կյանքում:

Այս առումով ուշագրավ է նաև Մ. Ներսիսյանի վերջին տարիներին հրատարակած մի այլ մենագրություն՝ «1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները»⁵, որը գիտական խորությամբ բացահայտում է այդ հերոսական Լպուպեայի լուսավոր պատկերները, ժողովուրդների մարտական համագործակցության ու բարեկամության տարեգրության շխունացող էջերը:

Գրքում հանգամանորեն շարադրված են մինչև այդ աննկատ մնացած այն հիմնավոր կովանները, որոնք բացահայտում են ուկրաինացիների, հայերի, վրացիների, սեծովյան (կամ կուրանյան) ու զապորոջյան կազակների, Կովկասի լեռնական ժողովուրդների, չերկեսների, կալմիկների մասնակցությունը պատերազմում և օգնությունը՝ թիկունքում:

Հեղինակը նյութեր է բաղկ Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի, Երևանի, Ստավրոպոլի, Կրասնոդարի և այլ քաղաքների արխիվներից ու գրադարաննե-

⁴ М. Г. Персисян, Из истории русско-армянских отношений. Ереван, т. I, 1956, т. II, 1960.

⁵ М. Г. Персисян, Отечественная война 1812 г. и народы Кавказа, Ереван, 1965.

րի ճանապարհը ֆունդերից, նշարտել շատ փոփոխություններ, բացահայտել բազմաթիվ նոր փոփոխություններ, մեր հանձն մի շարք գործիչներին:

Նշանակալի է Ա. Ներսիսյանի գիտական ռադիկալությունը թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի սխալաբեր մարքսիստական դիրքերից լուսաբանելու գործում: Գեղեցիկ յատուկ դար առաջ նա սլաշապահության ներկայացրեց իր դոկտորական դիսերտացիան, որը ժամանակին մի գիտական սխալագործություն էր՝ և՛ հարցերի համարձակ դրվածքով, և՛ դրանց համադրիչ ու ճիշտ լուծումներով: Գիտերտացիան հետագայում լույս տեսավ՝ հարստացած նոր լրացուցիչ նյութերով և ստասիս անգամ հրատարակվող կարևոր փաստաթղթերի հավելվածով՝:

Եթե մինչ այդ հայ պատմագրության մեջ գլխավորստան ուշադրություն էր դարձվում հայ ժողովրդի ազատագրական սույնարում լիբերալների ու պահպանողականների տարածանությունների վրա, սույն Ա. Ներսիսյանը ցույց տվեց, որ գրիսավորում ու վճռականը ոչ թե իշխող դասակարգերի երկու թևերի անպտուղ գրգռվողուցն էր, այլ հայ ժողովրդական զանգվածների տևական ու հերոսական պայքարն ազգային ու սոցիալական ճնշումների դեմ: Հեղինակը վստահեցրեց ցույց է տալիս շարժման հակաֆեոդալական-արմատական ու դեմոկրատական էությունը:

Անսցնորդվելով Վ. Լ. Լենինի դրույթներով, Ա. Ներսիսյանը ցույց է տալիս, որ ազգային-ազատագրական շարժման հիմնական ուժը գյուղացիությունն էր, որը և պայմանավորում է նրա արմատական ու հեղափոխական էությունը: Քանի որ այդ շարժումը դուրս չէր գալիս բուրժուա-դեմոկրատական ինդիվիդուալ լուծման շրջանակներից, դրանով իսկ այն բուրժուական էր՝ ըստ էության, բայց ոչ երբեք շարժիչ ուժերով, ստանալ ևս՝ դեկավարությամբ:

6 Ա. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, 1850—1870 թթ., Երևան, 1955:

Ա. Ներսիսյանի այս ինչպես և մյուս աշխատություններում ճիշտ գնահատական է տրվում հայ հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումների գործիչներին, ոչ միայն Նալբանդյանին, այլ և Պեշիկթաշլյանին, Պարոնյանին, Պատկանյանին, Բախաբեկին և շատ ուրիշներին: Լիաժամանակ նա ցույց է տալիս հայ ազատագրական շարժման գործիչների և հասարակական-քաղաքական հոսանքների ներկայացուցիչների մոլորություններն ու սխալները, բացահայտում դրանց արմատները, պարզում է հայ ժողովրդի կապերը մեծ ու հեռու հարևանների հետ, վեր հանում Խորքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական շարժման ուժերի միավորման փորձերը, համատեղ պայքարի փաստերը: Իրբում ուշագրավ վկայություններ են բերված հույն, բուլղար, արաբ, քուրդ ու ասորի ժողովուրդների ազատագրական պայքարի, նրանց հետ հայերի կապերի ու վերաբերմունքի մասին:

Հստակ, սպառիչ ու ճիշտ գնահատական տալով հայերի ռուսական կողմնորոշմանը և Լիբեյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու սխալմասկան ակտին, Ա. Ներսիսյանն անդրադառնում է աշխարհով մեկ ցրված հայ զանգվածների մեջ այդ իրադարձության արձագանքներին, և ցույց տալիս, որ բոլոր առաջադեմ գործիչները ողջունել են այդ պատմական իրադարձությունը՝ գնահատելով այն որպես հայ ժողովրդի փրկության ու միավորման սկիզբ ու նախապայման: Ընդգծելով Լիբեյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու տևտեսական, քաղաքական ու կուլտուրական նշանակությունը Ա. Ներսիսյանը միաժամանակ հակադրում է ցարիզմի տիրապետության բացասական կողմերն անտեսելու վտանգավոր տենդենցին. «Անցնելով ցարիզմի տիրապետության տակ,— գրում է նա,— հայ ժողովուրդը, իհարկե, չազատվեց ճնշումներից ու հարստահարություններից: Ցա-

րական կառավարությունը կեղեքում ու ճնշում էր ինչպես ոռու, այնպես էլ մյուս ժողովուրդներին: Նա վարում էր ազգային ճնշման ու հարստահարման քաղաքականությունը:

Ազատագրական շարժումները բնության առարկա են դարձել Ներսիսյանի ոչ միայն մենագրություններում, այլ և բազմաթիվ արժեքավոր հոդվածներում: Հայտնի է, որ սովետահայ պատմագրության մեջ տարիներ շարունակ մոռացության էր տրված հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկը: Ներսիսյանն առաջինների թվում հանդես եկավ նրա մասին ուշագրավ հոդվածներով, որոնք սկզբունքային նշանակություն ունեցան պատմական ճշմարտության վերականգնման համար:

Արևմտահայերի զանգվածային ոչընչացման և մարդկության դեմ այդ ոճրագործության մեջ թուրքական պետության հանցագործ դերի ու արևմտաեվրոպական իմպերիալիստների մասնակցությունը բացահայտելուն է նվիրված Մ. Ներսիսյանի կազմած ու խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ծավալուն և իր էությամբ շատ կարևոր նշանակություն ունեցող ժողովածուն՝ «Հայերի գեոցիոլոգ Օսմանյան կայսրության մեջ»⁷: Դա անհերքելի իրողությունների հավաստի արձանագրություն է, մեղադրական մի ակտ, որի յուրաքանչյուր փաստը կոչ է անում աշխարհի խաղաղասեր մարդկանց դատապարտել թուրք կառավարող շրջանների ցեղասպանությունը, կանխել գեոցիոլոգ անավոր վտանգն ընդհանրապես:

Մ. Ներսիսյանը մեր երկրի արխիվներից տարիների բնթացքում հավաքել է բացառիկ արժեք ունեցող վավերագրեր, որոնք զգաստացնում են մարդկանց, ատելությանը լցնում նրանց սրտերը ջարդարարների նկատմամբ և սև ու համակրանք առաջացնում գողգոթա ապրած ժողովրդի նկատմամբ: Ինչպես նախորդ,

այնպես էլ այս նրատարակությունը քաղաքական, գիտական ու դաստիարակչական մեծ նշանակություն ունի և մշտական տեղ է գրավում մեր գիտական գրականության մնայուն ֆոնդում:

Որքան էլ նշանակալի են ներկայացված աշխատությունները, ինչքան էլ մեծ նրանց ցանկը, Մ. Ներսիսյանի գիտական ծառայությունները բնավ դրանցով չեն սպառվում: Գիտական աշխատանքների ձեռներեց կազմակերպիչ, նա առաջիններից մեկն էր, որ մտահոգվեց ընթերցող հասարակագրության, դպրոցի ու բուհերի համար հայ ժողովրդի պատմության ձեռնարկ ստեղծելու խնդրով: Նրա մասնակցությամբ կազմվել, խմբագրվել և դեռևս 1943—44 թթ. հրատարակվել է հայ ժողովրդի պատմության անդրանիկ ձևով: Մ. Ներսիսյանի ներդրանքությամբ ու խմբագրությամբ է հրատարակվել միջնակարգ դպրոցների համար գրված «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի II հատորը: Լինելով ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտի դիրեկտոր (1939—1947 թթ.), Մ. Ներսիսյանը մեծ աշխատանք է կատարել ֆիլիալի «Տեղեկագրի» հրատարակության ու նրա գիտական մակարդակի բարձրացման գործում, կղել է նրա խմբագիրն ու խմբագրական կոլեգիայի անդամը: Տարիներ շարունակ ղեկավարելով ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհուրդը և նպաստելով նրա հրատարակչական բազայի ընդլայնմանը, նա իր գործունեությամբ աջակցել է ինչպես հասարակական, այնպես և մյուս գիտությունների գծով լույս տեսնող գրականության բանական ու որակական աճին:

Մ. Ներսիսյանը 1950 թ. ընտրվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս և 15 տարի աշխատելով որպես վիցե-պրեզիդենտ և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, մեծ ջանքեր է գործադրել հայագիտական և պատմագիտական կենտրոնների ստեղծման գործում: Մ. Ներսիսյանի նախաձեռ-

7 М. Г. Перенсян. Генциол армян в Османской империи, Ереван, 1966.

նությունը հիմնադրվել ու նրա խմբագրությանը անա արդեն 13 տարի հրատարակվում է «Պատմա-բանասիրական հանդեսը», որը յայն ճանաչում է գտել մեր երկրում և նրա սահմաններից դուրս:

Նշանակալի Լ. Իոբելյարի դասախոսական-մանկավարժական գործունեությունը: Տասնյակ տարիներ շարունակ նա դասախոսություններ է կարդացել համալսարանում, ղեկավարել Լ. Բազմաթիվ ասպիրանտների աշխատանքներ, հանդես եկել որպես թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաների ընդդիմախոս: Միաժամանակ նա աշխատել է որպես պատմության ֆակուլտետի ղեկավար, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1966-ից՝ Լրեանի համալսարանի ռեկտորն է: Գլխավորելով հանրաճանաչության անվանախոշոր ուսումնական հաստատության և գիտական առաջավոր կենտրոններից մեկի գործունեությունը, նա եռանդուն մասնակցություն է ունեցել այն բանում, որ համալսարանում ստեղծվել են նոր գիտական օջախներ, հայագիտական կենտրոն, նոր ամբիոններ, կազմակերպվել Լ. արևելագիտության ֆակուլտետ: Հիմնադրվել են «Բանյեր Լրեանի» համալսարանի», «Լրեանի պետական համալսարան» հանդեսները, ինչպես և մյուս գիտությունների գծով հրատարակվող ժողովածուներ: Այս ամենի հետ միասին Լ. Ներսիսյանը շարունակում է իր գիտական աշխատանքը:

ակադեմիայի պատմության ինստիտուտում: Նա «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի ակադեմիական հրատարակության գլխավոր խմբագրության անդամ է, 5-րդ հատորի գլխավոր խմբագիրը:

Գիտնական և մանկավարժ, գիտության կազմակերպիչ ու կադրերի հոգատար դաստիարակ, ջերմ հայրենասեր ու ակտիվ հասարակական գործիչ՝ այդպիսին գիտեն ԼՄԿրտիչ Գեղամի Ներսիսյանին բոլորը, ովքեր ճանաչում են նրան:

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել Ներսիսյանի գիտական, մանկավարժական ու հասարակական-քաղաքական գործունեությունը և նրան պարգևատրել շքանշաններով ու մեդալներով:

Գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լ. Գ. Ներսիսյանը ՀԿԿ ԿԿ անդամ է: Նա պարբերաբար ընտրվում է Լրեանի քաղաքային սովետի, Հայաստանի և Սովետական Միության Գերագույն սովետների ղեկուստատ: Այս տարի հոբելյարը նորից ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի ղեկուստատ:

Լեկանավոր գիտնական ու եռանդուն հասարակական գործիչ ԼՄԿրտիչ Ներսիսյանին ցանկանք քաջաոռոջություն, տասնամյակների երջանիկ կյանք և արգաստվոր գիտական գործունեություն: